ՀՏԴ 72(479.25):7.05:687.1
https://doi.org/10.67819/30453267-26.1hc1-03

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԳՈՒՍՏԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գայանե Լ. Եղիազարյան
Մ. Մաշտոցի անվան համալսարան,
Երևան, Հերացի փ., 2/1 շենք,
Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան,
Երևան, Տիգրան Մեծի պող., 17շենք,
e-mail: design69@rambler.ru

Ամփոփում

Սույն հետազոտությունը նվիրված է հայկական ճարտարապետական ժառանգության զարդանախշային համակարգի և ժամանակակից բարձրարվեստ հագուստի դիզայնի միջև հորինվածքային փոխկապակցվածության ուսումնասիրությանը: Հետազոտական աշխատանքում հայկական միջնադարյան ճարտարապետության դեկորատիվ-պլաստիկ խոսքը, լեզուն վերաիմաստավորվել է ժամանակակից հարսանեկան բարձր նորաձևության (haute couture) հագուստի հորինվածքում: Քննարկվում են ճարտարապետական հորինվածքի՝ համաչափության, ռիթմի, ծավալատարածական հարաբերությունների, ուղղահայաց դինամիկայի, համաչափության և զարդանախշային ինտեգրման սկզբունքները, որոնք վերաիմաստավորվում են հագուստի կառուցվածքային համակարգում: Հետազոտական աշխատանքում որպես օրինակ դիտարկվում է հայկական շքեղ հարսանեկան հանդերձանքի մոդելը, որի ասեղնագործական դեկորը սինթեզված է հայկական տաճարաշինության և խաչքարային արվեստի գաղափարներով: Այն մշակութային ժառանգության նորովի արտահայտման, կերպավորման միջոց է:

Հիմնաբառեր. հայկական ճարտարապետություն, հագուստի դիզայն, հայկական ասեղնագործություն, մշակութային ժառանգություն, նորաձևություն, սինթեզ:

Նորույթը

Հետազոտական աշխատանքում համադրվել են հայկական եկեղեցիների, վանքային համալիրների գմբեթների, կամարների, խաչքարերի բուսական, երկրաչափական զարդանախշային լուծումները ժամանակակից հարսանեկան հագուստի կառուցվածքային և դեկորատիվ լուծումներին՝ առանցքային բաղադրիչների համակարգման, վերակազմավորման միջոցներով, ինչը մշակութային ժառանգության պահպանության և նորովի արտահայտման, վերակերպավորման, սերունդներին ազգային մշակույթի փոխանցման միջոց է:

Ներածություն

Միջազգայնացման հավաստագրման եզրույթում ազգային ինքնության արտահայտումը նորաձևության մեջ ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Ժամանակակից բարձր նորաձևության ոլորտում առավել ակտուալ է դառնում ազգային մշակութային ժառանգության վերագնահատումը՝ որպես նոր գեղարվեստական լեզվի ձևավորման հիմք: Հայկական ճարտարապետությունը՝ իր հոյակերտ ծավալային համակարգերով, հարուստ զարդանախշերով, քարարվեստի մանրակրկիտ մշակմամբ և խորհրդանշական շերտերով, հանդիսանում է հագուստի ձևաստեղծման բացառիկ աղբյուր:

XXI դարի նորաձևության համաշխարհային զարգացումները վկայում են ազգային մշակութային ժառանգության վերաիմաստավորման աճող միտումների մասին[1]: Միջազգայնացման պայմաններում ազգային ինքնության պահպանության խնդիրը դառնում է առավել կարևոր, հատկապես արվեստի և նորաձևության ոլորտներում, որտեղ մշակութային խորհրդանիշերը վերաճում են ժամանակակից գեղարվեստական լեզվի: Այս համատեքստում հայկական ճարտարապետությունը դիտարկվում է ոչ միայն որպես պատմամշակութային ժառանգություն, այլև որպես հագուստի հորինվածքային մոդելավորման և ձևաստեղծ մտածողության կարևոր աղբյուր: Հայկական եկեղեցաշինությունն առանձնանում է ուղղահայաց, վերսլաց տարրերի գերակայությամբ, գմբեթային կառուցվածքներով, ռիթմիկ ճարտարապետական համակարգերով և հարուստ քարաքանդակային զարդարվեստով, որոնք կարող են վերածևավորվել հագուստի գեղարվեստական կառուցվածքի:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության նպատակը հայկական ճարտարապետության հորինվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունն է և կիրառության հնարավորությունների դիտարկումը հայկական հարսանեկան հագուստի հորինվածքում, դրանց համակարգման գիտական հիմնավորումը: Այս համատեքստում իրականացրել ենք ճարտարապետական հորինվածքի մասնատման, տարրերի հատկանիշների դիտարկման, նորովի վերտառման, հագուստի հորինվածքում վերաիմաստավորման վերլուծական-փորձառական մեթոդաբանությունը:

Խնդրի արդիականությունը պայմանավորված է.

1. ազգային ինքնության պահպանման անհրաժեշտությամբ,
2. հայկական մշակութային ժառանգության արդիականացման և նորովի փոխանցման պահանջով,
3. ժամանակակից հայկական դիզայնի ձևավորման միտումներով,
4. հայկական բարձրարվեստ հարսանեկան հագուստի մոդելավորման անհրաժեշտությամբ,
5. ճարտարապետության և հագուստի միջև միջառարկայական կապերի հետազոտության կարևորությամբ:

Այս պայմաններում մշակել ենք գիտականորեն հիմնավորված համակարգ, որը հնարավորություն կընձեռի ճարտարապետական ձևերը, ռիթմերը, ծավալները և զարդանախշերը փոխակերպել ժամանակակից հագուստային համակարգերի:

Հետազոտությունում կիրառել ենք համեմատական արվեստաբանական վերլուծության, ձևաբանական և հորինվածքային վերլուծության, մշակութաբանական վերլուծության, նախագծային մոդելավորման, պատմահամեմատական դիտարկման մեթոդները:

Հետազոտություն

Հայկական ճարտարապետությունը ձևավորվել է հազարամյակների ընթացքում՝ ներառելով մոնումենտալություն, առանցքակենտրոն համաչափություն և խորհրդանշական պատկերային համակարգ[2]: Հայկական միջնադարյան եկեղեցիները հաճախ ունեն կոնաձև կամ բրգաձև գմբեթներ, որոնք ստեղծում են վերելքի և հոգևոր բարձրացման գաղափար[3]: Այս առանձնահատկությունները կարող են դառնալ ժամանակակից հայկական հարսանեկան հագուստի սիլուետային հորինվածքի կարևոր նախատիպեր:

Ժամանակակից նորաձևության մեջ աճում է ազգային մշակութային խորհրդանիշերի կիրառության անհրաժեշտությունը: Համաշխարհային նորաձևության տներում կիրառվում են ազգային մոտիվների, մշակութային խորհրդանիշների վերաիմաստավորումները[4,5]: Սակայն հայկական մշակութային ժառանգության, հատկապես հայկական ճարտարապետության հորինվածքային առանձնահատկությունների համակարգված կիրառությունը հայկական հարսանեկան բարձրարվեստ հագուստի նախագծման մեջ դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ:

Հայկական ճարտարապետության կարևորագույն հորինվածքային առանձնահատկություններից է ուղղահայաց հորինվածքային համակարգը, որը ստեղծում է վերելքի և հոգևոր շարժման գաղափար: Այս սկզբունքը արտահայտել ենք հարսանեկան հագուստի երկարաձիգ ուրվագծերի, համաչափ առանցքային համակարգի, երկար քողի և ուղղահայաց ասեղնագործական շերտերի միջոցներով:

Հարսանեկան հագուստի հորինվածքում առանձնակի կարևորություն ունեն ռիթմն ու համաչափությունը: Հայկական սյունաշարերը, կամարները և պատուհանային հորինվածքները արտահայտվում են կրկնություններով, որոնք հագուստի հորինվածքում կերպավորվում են դեկորատիվ շերտավորումներով, ասեղնագործական ռիթմերով և ծալքավորումներով:

Հետազոտության գերակա խնդիրներն են՝

- Հայկական ճարտարապետության զարդանախշային համակարգի կառուցվածքային առանձնահատկությունների դիտարկումը:
- Ճարտարապետական ձևերի փոխակերպման և կիրառելիության հնարավորությունների հետազոտությունը հագուստի հորինվածքում:
- Ազգային ճարտարապետության դեկորի հագուստի հորինվածքում ինտեգրման խնդիրների բացահայտումը:
- Ժամանակակից հայկական հարսանեկան հագուստի գեղարվեստական մոդելի ձևաստեղծումը:
- Հայկական հարսանեկան հագուստի հորինվածքային մոդելի համակարգման տեսության մշակումը:

Որպես ուսումնասիրության տեսական հիմք դիտարկվել են հայկական միջնադարյան ճարտարապետական համալիրները՝ Գեղարդի վանական համալիր, Նորավանք, Հաղպատի վանական համալիր, Զվարթնոց տաճար, ինչպես նաև հայկական խաչքարային արվեստը՝ որպես

զարդանախշային համակարգ: Խաչքարերը բնութագրվում են արևային, հավերժության, բուսական և երկրաչափական մոտիվների համադրությամբ, նմուշների յուրօրինակ հորինվածքային արտահայտչականությամբ:

Հայկական հարսանեկան հագուստի հորինվածքում ճարտարապետական մոտիվների կիրառումը պետք է իրականացվի ոչ թե մեխանիկական պատճենման, այլ ստեղծագործական վերաիմաստավորման սկզբունքով: Հագուստի սիլուետը կարող է կառուցվել հայկական տաճարի կառուցվածքային տրամաբանությամբ՝ ընդգծված առանցքային համաչափությամբ, աստիճանական ծավալային ընդլայնմամբ, ռիթմով և վերսլացությամբ:

Ասեղնագործական համակարգում նպատակահարմար է կիրառել հայկական խաչքարային արվեստի բուսական և երկրաչափական զարդամոտիվները, որոնք ներառում են հավերժության նշաններ, արևային խորհրդանիշներ, խաղողի որթ, նռան պատկերային համակարգ և բարդ գծային հորինվածքներ: UNESCO-ի տվյալներով հայկական խաչքարերը կրում են խորհրդանշական և ծիսական նշանակություն, իսկ դրանց զարդաքանդակային կառուցվածքները տարբերվում են բացառիկ բազմազանությամբ:

Հայկական հարսանեկան հագուստի հորինվածքին ճարտարապետության փոխանցելի հատկանիշներն են՝

1. Ուղղահայաց դոմինանտությունը. հայկական տաճարներին բնորոշ ուղղահայաց հորինվածքային զարգացումը, որն արտահայտում է վերելք, հոգևոր բարձրացում և մոնումենտալություն: Այս սկզբունքը հագուստի հորինվածքում արտահայտվում է երկարաձիգ ուրվագծերով, երկար քողով, ուղղահայաց ասեղնագործական առանցքներով, ինչը արտահայտված է նկար 1-ում:

Նկ.1 ՈՒղղահայաց դոմինանտությունը հագուստի հորինվածքում:

2. Ռիթմը և համաչափությունը. կամարների, սյունաշարերի և պատուհանային լուծումների աճող կրկնությունները, որը հագուստում արտահայտվում է ասեղնագործության շերտայնությամբ, կրկնվող դեկորատիվ լուծումներով և թևքերի հորինվածքով[4]:

3. Զարդանախշային սիմվոլիզմը. Հայկական զարդանախշերը հաճախ կրում են խորհրդանշական բովանդակություն. խաղողի ողկույզը՝ պտղաբերություն, նուռը՝ կյանք, խաչաձև համակարգը՝ հավերժություն, արևային մոտիվները՝ լուսավորություն:

Նախագծվող հայկական շքեղ հարսանեկան հագուստում ճարտարապետական մոտիվների կիրառությունը դրսևորվում է.

- Ծավալատարածական համակարգում. հագուստի ծավալային կառուցվածքը հիշեցնում է հայկական տաճարի սիլուետը՝ ընդգծված կենտրոնական առանցքով և լայնացող ներքևի հատվածով՝ նման գմբեթային հորինվածքի:
- Ասեղնագործական լուծումներում. ասեղնագործության զարդանախշերը սինթեզված են խաչքարերի երկրաչափական համակարգերից, .կամարային ռիթմերից, հայկական որմնաքանդակային դեկորից, միջնադարյան մանրանկարչական մոտիվներից:

Հարսանյաց հագուստ գխազարդերը կարևոր նշանակություն ունեն հագուստի հորինվածքային համակարգը ամբողջացնելու և ավարտուն տպավորություն ստեղծելու առումով:

Գլխազարդը դիտարկվում է որպես ճարտարապետական պսակաձև հորինվածք՝ հիշեցնող հայկական գմբեթների ու թագաձև սաղավարտների պլաստիկան, իսկ բազմաշերտ քողը՝ որպես տարածական շարունակություն:

Հետազոտության ընթացքում բացահայտվել են հորինվածքային մի շարք խնդիրներ.

1. Դեկորի գերբեռնվածության վտանգը (նկ.2). ճարտարապետական զարդանախշերի անմիջական կրկնօրինակումը կարող է հանգեցնել տեսողական ծանրաբեռնվածության[6,7]:

Նկ. 2 Դեկորի գերբեռնվածությունը հայկական հարսանեկան հագուստում:

2. Ազգայինի և ժամանակակիցի հավասարակշռության անհրաժեշտությունը. (նկ.3) Կարևոր խնդիր է պահպանել հայկական ինքնությունը՝ միաժամանակ ստեղծելով միջազգային արդի պահանջներին համապատասխան կերպար:

Նկ. 3 Ազգայինի և ժամանակակցի հավասարակշռությունը
հայկական հարսանեկան հագուստում:

3. Գործառականությունը. ծանր ասեղնագործությունը և ծավալային կառուցվածքները կարող են սահմանափակել շարժունակությունը[8]:

4. Սինթեզի գեղարվեստական ամբողջականությունը. ճարտարապետության և հագուստի դիզայնի միջև կապը պետք է լինի ոչ թե մակերեսային մեջբերում, այլ խորքային հորինվածքային վերաիմաստավորում[6]:

Եզրահանգում

Ժամանակակից նորաձևության մեջ ազգային մշակույթի ինտեգրումը հանդիսանում է մշակութային դիմադրության և ինքնության պահպանման միջոց[9]: Հայկական ճարտարապետության հորինվածքային սկզբունքների կիրառությունը բարձրարվեստ հարսանեկան հագուստում հնարավորություն է ընձեռում ստեղծելու ազգային բարձրագույն նորաձևություն, որն ունի միջազգային ներկայացուցչական ներուժ[10]:

Ներկայացված հարսանեկան կերպարը կարող է դիտարկվել որպես «ապագայի հայկական նորաձևության թանգարանային մոդել», որտեղ ազգային ժառանգությունը վերածվել է ժամանակակից գեղարվեստական լեզվի:

Այս համատեքստում եզրահանգում ենք.

- Հայկական ճարտարապետությունը հանդիսանում է հագուստի դիզայնի հզոր ձևաստեղծ աղբյուր:
- Ճարտարապետական զարդանախշերի սինթեզը հարսանեկան հագուստում ձևավորում է ինքնատիպ ազգային նորաձևական լեզու[11]:
- Հորինվածքային ամբողջականության մեջ անհրաժեշտաբար պահպանվում են հավասարակշռությունը դեկորի և ծավալային համակարգի միջև:
- Հայկական հարսանեկան բարձրարվեստ հագուստը հանդիսանում է ազգային մշակութային բրենդ միջազգային նորաձևության ասպարեզում:

Գրականություն

1. **Տարազի հավաքածու: Պատկերագիրք-կատալոգ**, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2008, 36 էջ:
2. **Թորամանյան Թ.**, Հայկական ճարտարապետություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1942, 864 էջ:
3. **Հայկական զարդարվեստ և ճարտարապետություն**, Երևան, Հայաստան հրատարակչություն, 1978, 128 էջ:
4. **Հարությունյան Վ. Մ.**, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս» պետական հրատարակչություն, 1992, 631 էջ:
5. **Հայկական տարազ XVIII-XIX դարեր: Ալբոմ-կատալոգ** (Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից), Երևան, Ասողիկ հրատարակչություն, խմբագիրներ՝ Գրիգորյան Ա., Մկրտչյան Ի., 2014, 161 էջ:
6. **Մնացականյան Ա. Շ.**, Հայկական զարդարվեստ, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1955, 658 էջ:
7. **Сафина Л. А., Тухбатулина Л. М., Хамматова В. В.**, Дизайн костюма, Ростов-на-Дону, Феникс, 2006, 390 с.
8. **Рачицкая Е. И., Сидоренко В. И.**, Моделирование и художественное оформление одежды, Ростов-на-Дону, Феникс, 2002, 608 с.
9. **Бастрыкина Т. С.**, Формообразование как проблема философско-эстетического исследования (на материале дизайна костюма), Москва, Диссертация на соискание ученой степени кандидата философских наук, 2000, 154 с.
10. **Вопросы композиции**: Сборник научных трудов, Ижевск, под ред. В. Б. Кошаева, 1992, 160 с.
11. **Джонс С.**, Fashion-дизайн: все, что нужно знать о мире современной моды (пер. с англ.), СПб., Питер, 2012, 176 с.

COMPOSITIONAL FEATURES AND PROSPECTS OF THE SYNTHESIS OF ARMENIAN ARCHITECTURE AND COSTUME DESIGN

Gayane L. Yeghiazaryan
University named after M. Mashtots,
Yerevan, M. Heratsi St., 2/1,
Pedagogical University named after Kh.Abovyan,
Yerevan, 17 Tigran Mets Ave,
e-mail: design69@ramber.ru

Abstract

This study is devoted to the investigation of the compositional interrelationship between the ornamental system of Armenian architectural heritage and contemporary haute couture fashion design. Within the framework of the research, the decorative and plastic language of medieval Armenian architecture has been reinterpreted in the composition of contemporary haute couture bridal wear. The study examines the principles of architectural composition, including symmetry, rhythm, volumetric-spatial relationships, vertical dynamism, proportional harmony, and ornamental integration, which are subsequently reimagined within the structural system of costume design.

As a case study, the research presents a model of luxurious Armenian bridal attire whose embroidered decoration synthesizes concepts derived from Armenian ecclesiastical architecture and the art of khachkars (cross-stones). The proposed design serves as a means of reinterpreting and expressing cultural heritage through contemporary artistic representation.

Keywords: Armenian architecture, fashion design, Armenian embroidery, cultural heritage, fashion, synthesis.

Novelty

The study integrates the floral and geometric ornamental motifs of Armenian churches, monastic complexes, domes, arches, and khachkars into the structural and decorative solutions of contemporary bridal attire. This integration is achieved through the coordination and reconstruction of key compositional elements. Such an approach contributes to the preservation, reinterpretation, and transformation of cultural heritage while facilitating the transmission of national culture to future generations.

Conclusion

The integration of national culture into contemporary fashion serves as an important means of cultural resilience and the preservation of identity. The application of the compositional principles of Armenian architecture to haute couture bridal fashion creates opportunities for the development of a distinctive national haute couture tradition with significant international representational potential.

The bridal image presented in this study may be regarded as a "museum model of future Armenian fashion," in which national heritage is transformed into a contemporary artistic language.

In this context, the following conclusions may be drawn:

- Armenian architecture constitutes a powerful source of form generation in fashion design.
- The synthesis of architectural ornamentation within bridal attire creates a distinctive national fashion language.
- Within compositional integrity, a balanced relationship between decorative elements and volumetric structure must be maintained.
- Armenian haute couture bridal wear represents a national cultural brand with substantial potential in the international fashion arena.

КОМПОЗИЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ И ПЕРСПЕКТИВЫ СИНТЕЗА АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ И ДИЗАЙНА КОСТЮМА

Гаяне Л. Егиазарян
Университет им. М.Маштоца,
Ереван, ул. Гераци, 2/1,
Педагогический университет имени Х. Абовяна,
Ереван, пр. Тигран Меца, 17,
e-mail: design69@rambler.ru

Аннотация

Настоящее исследование посвящено изучению композиционной взаимосвязи между орнаментальной системой армянского архитектурного наследия и современным дизайном одежды высокой моды (haute couture). В рамках исследования декоративно-пластический язык средневековой армянской архитектуры был переосмыслен в композиции современного свадебного костюма высокой моды.

Рассматриваются принципы архитектурной композиции, такие как симметрия, ритм, объёмно-пространственные отношения, вертикальная динамика, пропорциональная гармония и интеграция орнамента, которые получают новое художественное воплощение в структурной системе костюма.

В качестве примера анализируется модель роскошного армянского свадебного наряда, вышивка которого синтезирует художественные идеи армянского храмового зодчества и искусства хачкаров. Данный проект представляет собой средство нового осмысления и художественного выражения культурного наследия.

Ключевые слова: армянская архитектура, дизайн костюма, армянская вышивка, культурное наследие, мода, синтез.

Новизна

В исследовании осуществлён синтез растительных и геометрических орнаментальных мотивов армянских церквей, монастырских комплексов, куполов, арок и хачкаров со структурными и декоративными решениями современного свадебного костюма. Интеграция реализована посредством координации и реконструкции ключевых композиционных элементов.

Данный подход способствует сохранению, переосмыслению и трансформации культурного наследия, а также передаче национальной культуры будущим поколениям.

Заключение

Интеграция национальной культуры в современную моду выступает важным средством культурной устойчивости и сохранения национальной идентичности. Применение композиционных принципов армянской архитектуры в свадебной одежде высокой моды открывает возможности для формирования национальной школы haute couture, обладающей значительным международным представительским потенциалом.

Представленный свадебный образ может рассматриваться как «музейная модель армянской моды будущего», в которой национальное наследие преобразовано в современный художественный язык.

В данном контексте можно сделать следующие выводы:

- Армянская архитектура является мощным источником формообразования в дизайне костюма.
- Синтез архитектурного орнамента в свадебной одежде формирует самобытный национальный язык моды.
- В композиционной целостности необходимо сохранять баланс между декоративными элементами и объёмно-пространственной структурой костюма.
- Армянская свадебная одежда высокой моды представляет собой национальный культурный бренд, обладающий значительным потенциалом на международной модной арене.